ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության տարած պատմական հաղթանակի 30-ամյակը մեր ժողովուրդը նշում է միջազգային իրադրության լարվածության միջ թե շատ բուլացման պայմաններում. նրա միջազգային հարաբերությունների զարգացման գլխավոր տենդենցը արտահայտվում է մի շարք դրական փոփոխություններով: Սակայն գլխավոր հակասությունները սոցիալիզմի և կապիտալիզմի միջև շարունակում են գոյություն ունենալ: Ինչպես ասված է հաղթանակի 30-ամյակի վերաբերյալ ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, «չի կարելի մոռանալ, որ իմպերիալիզմի բնույթը չի փոխվել, որ ռեակցիայի և ագրեսիայի ուժերը գենքը վայր չեն դրել և փորձում են արգելակել միջազգային հարաբերություններում տեղի ունեցող դրական փոփոխությունները»:

Պայքարը սոցիալիզմի և կապիտալիզմի միջև շարունակվում է, բոլոր ճակատներում՝ թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ գաղափարական բնագավառներում, ըստ որում ավելի ու ավելի սուր բնույթ է կրում գաղափարական պայքարը:

Սոցիալիստական լագերի տնտեսական, քաղաքական ու ռազմական անող հզորությունը խոշոր փոփոխություններ է առաջացրել միջազգային ասպարեզում՝ հօգուտ սոցիալիզմի: Դրան զուգընթաց, սոցիալիստական լագերի խաղաղասիրական քաղաքականության կենսագործմամբ միջազգային լարվածության զգալի բուլացումը մեծ անհանգստություն է առաջացնում «սառը պատերազմը» հրահրողների մոտ: Այդ պատճառով նրանք որոշակի հույսեր են կապում գաղափարական պայքարում ամեն տեսակ կեղծարարությունների ու զրպարտանքի հետ, նպատակ ունենալով վարկաբեկել սոցիալիզմը և խանգարել միջազգային լարվածության բուլացմանը:

ՍՄԿԿ XXIV համագումարում Կենտկոմի հաշվետվության մեջ ասված է. «Մենք ապրում ենք գաղափարական անդադրում պատերազմի պայմաններում, որը մեր երկրի դեմ, սոցիալիզմի աշխարհի դեմ մղում է իմպերիալիստական պրոպագանդան՝ օգտագործելով ամենաներին եղանակներ ու տեխնիկական հզոր միջոցներ: Մտքերի վրա ներգործելու բուրժուազիայի ձեռքին գտնվող գործիքները՝ մամուլը, կինոն, ռադիոն մոբիլիզացված են, որպեսզի մոլորության մեջ գցեն մարդկանց, նրանց մեջ այն պատրանքը ստեղծեն, թե կապիտալիզմի օրոք կյանքը համարյա եղեմական է, զրպարտեն սոցիալիզմը: Երբեք բառացիորեն հագեցած է մեր երկրի, սոցիալիզմի եղբայրական երկրների կյանքի մասին ամեն կարգի հերյուրանքներով»[1]:

---

[1] «ՍՄԿԿ XXIV համագումարի նյութերը», Երևան, 1971, էջ 120—121։

Սոցիալիզմի և կապիտալիզմի միջև գաղափարական պայքարի հարցերից մեկը եղել և մնում է երկրորդ համաշխարհային պատերազմի, մասնավորապես Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի պատմության հարցը:

Պատերազմի ավարտից հետո անցած 30 տարում, հատկապես վերջին շրջանում բուրժուական պատմաբանները հսկայական ծավալով գրականություն են հրատարակել այդ հարցի վերաբերյալ: 1972 թ. լույս է տեսել ամերիկյան պատմաբան Զ. Զիգլերի «Երկրորդ համաշխարհային պատերազմը: 1945—1965 թթ. անգլերեն լեզվով լույս տեսած գրքեր»: Աշխատության տվյալներով այդ թվականներին, այսինքն պատերազմից հետո անցած 20 տարում, անգլերեն լեզվով խոսող երկրներում լույս է տեսել 4500 անուն գիրք, որը վերաբերում է քաղաքականության, դիվանագիտության ու զինված պայքարի հարցերին[2]: Միջին հաշվով տարեկան հրատարակվել է 225 անուն գիրք: Նման գրականություն է լույս տեսել նաև Արևմտյան Եվրոպայում, մասնավորապես Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունում և մի շարք այլ երկրներում:

Սոցիալիզմի դեմ իր գաղափարական պայքարի բազմապիսի ձևերի հետ միասին բուրժուազիան օգտագործում է նաև երկրորդ համաշխարհային պատերազմի և Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի պատմությունը, հիմնական խնդիր ունենալով կեղծել պատմությունը, նսեմացնել Սովետական Միության վճռական դերը ֆաշիստական բլոկի ջախջախման գործում և արհեստականորեն մեծացնել մասնավորապես Ամերիկայի Միացյալ Նահանգների ու նրա զինված ուժերի դերը գերմանական ֆաշիզմի և միլիտարիստական Ճապոնիայի դեմ տարած հաղթանակի գործում: Այդ նպատակին են ծառայում վերջին տարիներին Ամերիկայի Միացյալ Նահանգներում լույս տեսած Լ. Ֆիշերի «Յալթա տանող ուղին» (1972), Դ. Լենսենի «Տարօրինակ շեղումը» (1972), Թ. Բեյգելի «Դժվարին դաշինք» (1972), Է. Ցիմկեի «Ստալինգրադից մինչև Բեռլին» (1972), Ա. Սիտոնի «Ճակատամարտ Մոսկվայի համար» (1971) և բազմաթիվ այլ աշխատություններ: Բնորոշ է, որ բուրժուական պատմաբանները վերջերս սկսել են գրքեր հրատարակել նաև սովետական նշանավոր ռազմական գործիչների մասին: Դրանցից է, օրինակ, ամերիկյան պատմաբան Օ. Զեյնի «Ժուկով» ստվարածավալ մենագրությունը, ուր որոշ կենսագրական տվյալներ տալուց հետո այդ հեղինակը միտումնավոր կերպով է ներկայացնում պատմությունը, վատաբանելով սովետական ռազմական արվեստը, սովետական ռազմիկների բարձր հատկությունները:

Հետաքրքիր է նշել, որ բուրժուական ռազմա-պատմական գրականության մեջ առաջնությունը պատկանում է ամերիկյան հեղինակներին: Այդ բնագավառում արդեն հայտնի են բազմաթիվ նոր անուններ, ինչպիսիք են Զ. Տոուլենը, Պ. Էյսորը, Զ. Կոգինզը, Ս. Էմբրոզը, Դ. Պարմեթը և ուրիշներ, որոնք շարունակելով նախորդ պատմաբանների գործը՝ կեղծարարությունն ու զրպարտանքը, նոր պայմաններում յուրովի են մեկնաբանում պատմական իրադարձությունները ու փաստերը: Անկարող լինելով անտեսել անցած ժամանակաշրջանում Սովետական Միությունում և մի շարք այլ երկրներում հրատարակված փաստական հարուստ նյութերը պատերազմի վերաբերյալ, որոնք

2 Տե՛ս «Вопросы истории КПСС», 1974, № 4, էջ 34:

ճիշտ պատկերացում են տալիս պատմական իրադրության մասին, բուրժուական պատմաբաններից շատերը այժմ զգույշ են, ավելի մեղմ, իրենց գործերում հաճախ ձևականորեն հենվում են սովետական հեղինակների աշխատությունների վրա: Բայց նրանց գլխավոր նպատակն է կեղծել պատմությունը և ապակողմնորոշել ընթերցողներին.

Կենտրոնական, գլխավոր հարցը, որի կապակցությամբ ամենից հաճախ են զրում արևմտյան պատմաբանները, այն է, թե ո՞ր պետությունն ու բանակն է եղել հիտլերյան Գերմանիան և ամբողջությամբ վերցրած ֆաշիստական բլոկը ջախջախող գլխավոր ուժը:

Պատմական իրականությունը և անժխտելի փաստերը համոզիչ կերպով ցույց են տալիս, որ այդ ուժը եղել է Սովետական Միությունը, նրա հերոսական կարմիր բանակը:

Հակառակ դրան, պատերազմի ավարտից հետո անցած 30 տարում պատմության կեղծարարները բոլոր ուժերով ճգնել և ներկայումս էլ ճգնում են ապացուցել այն առասպելը, որ իբր թե ֆաշիստական բլոկի ջախջախման գլխավոր ուժը եղել են Ամերիկայի Միացյալ Նահանգները, ամերիկյան բանակը:

Այդ կեղծարարությունը ցույց տալու համար համառոտակի անդրադառնանք պատերազմական ժամանակաշրջանի իրադարձություններին:

Ինչպես հայտնի է, 1941 թ. հունիսին ֆաշիստական Գերմանիայի հարձակումը Սովետական Միության վրա արմատապես փոխեց 1939 թ. սկսված երկրորդ համաշխարհային պատերազմի բնույթն ու նպատակները: Այդ պատերազմում իրար դեմ կռվում էին մի կողմից ֆաշիստական Գերմանիան իր դաշնակիցներով, մյուս կողմից՝ Անգլիան, Ֆրանսիան, ապա նաև Ամերիկայի Միացյալ Նահանգները: Սկզբնական շրջանում այն կրում էր զավթողական, անարդարացի բնույթ, քանի որում այդ ժամանակ դեռևս ոչ մի ուժ չկար, որ ի վիճակի լիներ ջախջախելու ֆաշիստական բլոկը:

Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության հիմնական խնդիրն էր ոչնչացնել ֆաշիստական Գերմանիայի բանակն ու պետությունը, եղբայրական օգնության ձեռք մեկնել ֆաշիզմի լծի տակ հեծող եվրոպական ժողովուրդներին, գլխովին ջախջախել ֆաշիստական զավթիչներին: Նա չէր հետապնդում զավթողական ոչ մի նպատակ: Մինչդեռ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի որոշ ռեակցիոն շրջաններ ձգտում էին այդ պատերազմում Սովետական Միության միջոցով թուլացնել ինչպես Գերմանիային և Ճապոնիային, այնպես էլ Սովետական Միությանը ու բոլորին թելադրել իրենց կամքը:

Սակայն իմպերիալիստների այդ նպատակները ձախողվեցին, Սովետական Միությունը ոչ միայն դիմացավ պատերազմի ծանր փորձություններին, այլև գնալով մեծացրեց իր ռազմական հզորությունը:

Հայրենական պատերազմում իր հետապնդած նպատակների ինտերնացիոնալիստական և հումանիստական բնույթի շնորհիվ Սովետական Միությունը շահեց ոչ միայն ֆաշիստների կողմից օկուպացված երկրների ժողովուրդների, այլև Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի ու մյուս երկրների աշխատավորների համակրանքն ու աջակցությունը:

Հայրենական պատերազմը, նախ, հսկայական ներգործություն ունեցավ հակահիտլերյան բլոկի ժողովուրդների ու պետությունների պայքարի վրա,

և դա ավելի բարձրացրեց Սովետական Միության վճռական դերը երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթական ավարտի գործում:

Երկրորդ՝ Հայրենական պատերազմի սկզբում մեծ ծավալ ընդունեց դիմադրական շարժումը ֆաշիստների կողմից օկուպացված երկրներում: Կարմիր բանակի հաղթանակների շնորհիվ ավելի լայն բնույթ ընդունեց պայքարը ֆաշիստական օկուպանտների դեմ Հարավսլավիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Իտալիայում, Ֆրանսիայում:

Երրորդ՝ հակահիտլերյան կոալիցիայի պետությունների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի և մյուս երկրների բանվոր դասակարգի և աշխատավորության շրջանում ավելի արմատավորվեց պատերազմի ազատագրական բնույթի գիտակցությունը: Ուժեղացան սովետական ժողովրդի և պետության կապերը մյուս երկրների, առաջին հերթին՝ օկուպացված երկրների ժողովուրդների, ինչպես նաև հակահիտլերյան բլոկի երկրների ժողովուրդների ու պետությունների հետ:

Չորրորդ՝ ստեղծվեց և ամրապնդվեց մի շարք ժողովուրդների և պետությունների հակահիտլերյան կոալիցիան, որում առաջատար ու վճռական տեղ գրավեց Սովետական Միությունը: Ըստ պատշաճի գնահատելով դաշնակիցների օգնությունը, Սովետական Միությունը միաժամանակ հանդես եկավ ԱՄՆ-ի և Անգլիայի որոշ շրջանների ռեակցիոն ձգտումների դեմ, որոնք կասենում էին թուլացնել հակահիտլերյան ճակատը:

Հինգերորդ՝ մինչև երկրորդ ռազմաճակատի բացվելը, երեք տարի շարունակ տանելով պատերազմի ամբողջ ծանրությունը և մոբիլիզացնելով իր բոլոր ուժերն ու հնարավորությունները, Սովետական Միությունը ֆաշիստական Գերմանիային ու նրա դաշնակիցներին հասցրեց ջախջախիչ հարվածներ, որոնք ապահովեցին թշնամու լիակատար պարտությունը: Դրանով իսկ Սովետական Միությունը ամենից գործուն կերպով օգնեց Եվրոպայի ու Ասիայի մի շարք ժողովուրդներին՝ ազատագրվելու օկուպանտների լծից:

Ֆաշիստական Գերմանիայի ու նրա դաշնակիցների ջախջախման գործում կարմիր բանակի վճռական դերի մասին հստակ պատկերացում են տալիս ուժերի դասավորությունը և ռազմական գործողությունների ծավալումը պատերազմի ռազմաճակատներում:

Ինչպես հայտնի է, պատերազմի սկզբում սովետա-գերմանական ճակատում գտնվում էր ֆաշիստական 190 դիվիզիա, որից 153-ը՝ գերմանական (նրա բանակի 70 տոկոսը), իսկ մնացածը սատելիտների զորքերն էին: Այս ճակատում էր կենտրոնացած թշնամու ռազմական տեխնիկայի մեծագույն մասը՝ տանկային բոլոր չորս խմբավորումները 3712 տանկով, 5 հազար ինքնաթիռով, 50 հազար հրանոթով և այլն: Մինչև երկրորդ ճակատի բացվելը, այսինքն մինչև 1944 թ. կեսերը, գերմանական բանակի ավելի քան 75 տոկոսը գտնվում էր սովետա-գերմանական ռազմաճակատում: Թշնամու մնացած ուժերը դասավորված էին օկուպացված երկրներում և մյուս ռազմաճակատներում, իսկ երկրորդ ճակատի բացումից հետո՝ նաև այնտեղ: Բնորոշ է, որ Գերմանիան երկրորդ ռազմաճակատում կենտրոնացրել էր համեմատաբար ավելի բույլ դիվիզիաներ և բանակներ: Այդ մասին նույն ռազմաճակատի ֆաշիստական զորքերի չտարի պետ գեներալ Զ. Վեստֆալը գրել է, որ երկրորդ ռազ-

մանակատում գերմանական զորքերի մարտունակությունը ավելի ցածր էր, քան սովետա-գերմանական ռազմաճակատում:

Սովետական Միությանը, նրա զինված ուժերի վճռական դերը ֆաշիստական բլոկի ջախջախման գործում ակնառու կերպով ցույց է տալիս նաև այն փաստը, թե ինչպիսի խոշոր մարդկային ու նյութական վնասներ կրեց ֆաշիստական բանակը սովետա-գերմանական ռազմաճակատում: Ամբողջ պատերազմի ընթացքում ֆաշիստական Գերմանիան իր ունեցած 587 դիվիզիայից 507-ը կորցրեց այս ռազմաճակատում: Բացի դրանից, 100 դիվիզիա կորցրեցին նրա սատելիտները: Այսպիսով, ֆաշիստական բլոկի ընդհանուր կորուստների թիվը սովետա-գերմանական ռազմաճակատում կազմում է 607 դիվիզիա: Մինչդեռ բոլոր ռազմաճակատներում՝ Հյուսիսային Աֆրիկայում, Իտալիայում և Արևմտյան Եվրոպայում պատերազմի ամբողջ ընթացքում մեր դաշնակիցների՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի զորքերը ջախջախեցին թշնամու միայն 176 դիվիզիա:

Ֆաշիստական բանակի գլխավոր հրամանատարության տվյալներով 1941 թ. հունիսից մինչև 1945 թ. մայիսը նրա բանակը կորցրել էր 13610 հազար զինվոր ու սպա, որից 10 միլիոնը՝ սովետա-գերմանական ռազմաճակատում, չհաշված մի քանի միլիոն զինվորներին ու սպաներին, որոնք գերի հանձնվեցին սովետական բանակին[3]: Մինչդեռ ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, սկսած 1939 թ., Գերմանիան անգլո-ամերիկյան զորքերի դեմ մղված բոլոր մարտերում կորցրել է 3.61 միլիոն զինվոր ու սպա:

Պատերազմի 47 ամսվա ընթացքում սովետա-գերմանական ռազմաճակատում թշնամին կորցրեց 77 հազար ինքնաթիռ, 48 հազար տանկ, 167 հազար հրանոթ և մեծ քանակությամբ ռազմական այլ տեխնիկա: Իսկ մեր դաշնակիցների դեմ մղած կռիվներում Գերմանիան կորցրեց միայն 24500 ինքնաթիռ, ավելի քիչ թվով տանկեր, հրանոթներ և ռազմական այլ տեխնիկա:

Ամբողջ Եվրոպայի (բացառությամբ Անգլիայի) մարդկային ու նյութական հնարավորությունները իր ձեռքում ունեցած և ժամանակակից հզոր տեխնիկայով զինված թշնամու դեմ պատմական հաղթանակը ձեռք բերվեց, իհարկե, սովետական ժողովրդի հերոսական պայքարի ու ծանր կորուստների գնով: Այդ դաժան պատերազմում Սովետական Միությունը տվեց 20 միլիոն մարդկային զոհ, որի մոտ կեսը կազմում են խաղաղ բնակչությունը և ռազմագերիները՝ զոհված համակենտրոնացման ճամբարներում: Իսկ ամբողջ պատերազմի ընթացքում Անգլիայի մարդկային կորուստները կազմում են մոտ 750 հազար, որից կեսը՝ զոհված, իսկ մնացածը՝ վիրավոր: Ամերիկայի Միացյալ Նահանգները, բոլոր ռազմաճակատներում միասին վերցրած, տվել են 405 հազար զոհ, իսկ վիրավորների հետ միասին այդ թիվը հասնում է ընդամենը 1076 հազարի:

Հայտնի է, որ ֆաշիստական Գերմանիան Սովետական Միությանը հրկայական ավերածություններ և նյութական վնասներ հասցրեց, որոնց արժեքը կազմում է 679 միլիարդ ռուբլի, իսկ պատերազմական բոլոր ծախսերի հետ միասին մեր երկրի վնասը հասնում է 2 տրիլիոն 600 միլիարդ ռուբլու: Մինչդեռ մեր դաշնակիցների կրած վնասները զգալիորեն պակաս են: Ավելին,

---

[3] А. А. Епишев. Идеологическая борьба по военным вопросам, М., 1974, էջ 57:

ամերիկյան մոնոպոլիաները մեծ շահույթներ ստացան պատերազմող երկրներին զենք և ռազմամթերք վաճառելուց:

Ներմանիայի և նրա դաշնակիցների ջախջախումից հետո խաղաղ օվկիանոսում պատերազմական գործողություններ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Ճապոնիայի միջև դեռևս շարունակվում էին: Նրանք կարող էին ավելի երկարաձգվել, եթե չմիջամտեր Սովետական Միությունը, որը նույնպես վրոնական նշանակություն ունեցավ Ճապոնիայի ջախջախման գործում: Կատարելով իր դաշնակցային պարտավորությունները, Սովետական Միությունը պայմանավորված ժամանակին՝ 1945 թ. օգոստոսին պատերազմ հայտարարեց միլիտարիստական Ճապոնիային և գլխովին ջախջախեց նրա հիմնական հարվածային ուժը՝ Կվանտունգյան ավելի քան 700 հազարանոց ընտիր բանակը, որը և արագացրեց երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը: Դրանով Սովետական Միությունը խոշոր օգնություն ցույց տվեց Չինաստանի ժողովրդի հաղթական պայքարին ճապոնական միլիտարիստների դեմ:

Հակառակ վերոհիշյալ փաստերին, բուրժուական պատմաբանները և ռազմական գործիչները կեղծիքի ու զրպարտության միջոցով անցած 30 տարում անդադրում փորձել և փորձում են նսեմացնել Սովետական Միության վճռական դերը և դրա փոխարեն արհեստականորեն մեծացնել Ամերիկայի Միացյալ Նահանգների դերը: Դեռևս 1945 թ. ամերիկյան բանակի շտաբի պետ գեներալ Ջ. Մարշալը գրել է, որ հաղթանակը երկրորդ համաշխարհային պատերազմում պայմանավորված էր «Օվերլորդ» օպերացիայի հաջող գործողություններով, այսինքն՝ 1944 թ. հունիսին երկրորդ ռազմաճակատի բացումով: Ուրիշ հեղինակներ ավելի հեռու են գնում, փորձելով ցույց տալ, որ իբր երկրորդ ռազմաճակատը բացվել է ոչ թե 1944 թ., այլ ավելի վաղ: Այսպես, գերմանական գեներալ Տիպելսկիրխը պնդում է, որ երկրորդ ռազմաճակատը բացվել է 1942 թ. Ալժիրում և Մարոկկոյում անգլո-ամերիկյան զորքերի ափհանումով: Փորձեր են արվել և արվում նաև երկրորդ ռազմաճակատի բացումը համարել 1943 թ. անգլո-ամերիկյան զորքերի ափ հանումը Իտալիայում: Սակայն այդ ամենը զուրկ է որևէ հիմքից և հանդիսանում է պատմության կեղծում, քանի որ այդ ռազմական օպերացիաները իրենց մասշտաբներով շատ հեռու էին երկրորդ ռազմաճակատ համարվելուց, նույնիսկ իրենք՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի այն ժամանակվա ղեկավարները դրանք չեն համարել երկրորդ ռազմաճակատ, այլ՝ սովորական օպերացիաներ:

1971 թ. հրատարակած իր աշխատության մեջ ամերիկյան պատմաբան Ջոն Ստրաուսը պնդում է, որ իբր Միացյալ Նահանգները հանդիսացել են ֆաշիստական ագրեսորի դեմ մղված պայքարի ու հաղթանակի գինանոցը[4]: Դա, իհարկե, պատմության բացարձակ կեղծում է, այդ պատմաբանի ստեղծած առասպելը: Նույնպիսի առասպել է և այն, որ «մեծ եռյակի», այսինքն Սովետական Միության, ԱՄՆ-ի և Անգլիայի ռազմական դաշինքի մեջ ղեկավարող և տոն տվող ուժը պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտի կառավարությունն էր: Դա, իհարկե, խիստ չափազանցություն է: Ճիշտ է, Ֆ. Ռուզվելտը և նրա գլխավորած կառավարությունը պատերազմի ժամանակ կարևոր դեր են կատարել, բայց դա բնավ չի նշանակում, թե պետք է գերագնահատել այդ դերը և դրա փոխարեն միտումնավոր կերպով նսեմացնել Սովետական Միության

4 Տե՛ս «Вопросы истории КПСС», 1974, № 4, էջ 39:

որոշիչ դերը, նրա արտաքին քաղաքականությունը և հակայական ջանքերը հակաֆաշիստական հուժկու կոալիցիայի ստեղծման և նրա հաղթանակի գործում: Այդպես վարվելով, մեր օրերի բուրժուական կեղծարարները փորձում են հերքել նաև այն ժամանակվա ԱՄՆ-ի և Անգլիայի մի շարք քաղաքական-ռազմական նշանավոր դեկավարների ասածները հակահիտլերյան կոալիցիայի հաղթանակի գործում Սովետական Միության վճռական դերի մասին: Հայտնի է, որ դեռևս 1942 թ. մեր երկրի համար ծանր օրերին ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտը գրել է. «Մեծ ստրատեգիայի տեսակետից պարզ է հասարակ փաստը—ռուսները (այսինքն՝ սովետական ժողովուրդը—Ա. Հ.) սպանում են հակառակորդի ավելի շատ զինվորներ և ոչնչացնում են նրա ավելի շատ սպառազինություն և ռազմամթերք, քան Միավորված ազգերի մնացած 25 պետությունները միասին վերցրած»[5]: Ըստ որում այդ 25 պետությունների թվում էին նաև ԱՄՆ-ը և Անգլիան: Այն ժամանակվա Անգլիայի պրեմիեր-մինիստր և զորքերի գլխավոր հրամանատար Չերչիլը, որը բոլոր ուժերով ձգտում էր ընդգծել ԱՄՆ-ի և Անգլիայի ռազմական հզորությունը, 1943 թ. պաշտոնական փաստաթղթերից մեկում գրել է. «Պետք է ընդունել, որ Անգլիայի և Միացյալ Նահանգների խոշոր ռեսուրսների համեմատ, մանավանդ Ռուսաստանի հրաբկայական ջանքերի համեմատ, մեր բոլոր ռազմական օպերացիաները իրագործվել են աննշան մասշտաբներով»[6]: 1944 թ. օգոստոսին համայնքների պալատում Չերչիլը հարկադրված խոստովանեց, որ սովետական բանակը խաղաց գլխավոր դերը գերմանական բանակների ջախջախման գործում, իսկ 1945 թ. հունվարի վերջերին, երբ կարմիր բանակը ամբողջ ճակատով առաջ էր շարժվում դեպի Գերմանիայի խորքը, Գերագույն գլխավոր հրամանատարին հղած նամակում գրում էր. «Մենք հիացած ենք ձեր փառապանծ հաղթանակներով բնդհանուր թշնամու նկատմամբ և հզոր ուժերով, որոնք դուք հանեցիք նրա դեմ»[7]: Մի այլ առիթով նա գրում էր, որ Սովետական Միության զինված ուժերը վտանգին գերմանական միլիտարիզմի բախտը[8]: Ամերիկյան բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Ջ. Մարշալը, ամփոփելով պատերազմի արդյունքները, 1945 թ. ԱՄՆ-ի ռազմական մինիստրին գեկուցել է. «Առանց սովետական բանակի հաջող գործողությունների, ամերիկյան զորքերը ի վիճակի չէին լինի դիմադրել ագրեսորին, և պատերազմը կարող էր փոխադրվել ամերիկյան մայրցամաք»[9]: Սրանով նա ժխտում է իր այն ասածը, որ պատերազմի ելքը որոշվեց «Օվերլորդ» օպերացիայի հաջող գործողություններով:

Պատմության բուրժուական կեղծարարները կամ համառորեն լռության են մատնում 1941—1945 թթ. սովետական ռազմական էկոնոմիկայի խոշոր հաջողությունները, կամ էլ աղճատում են իրականությունը: Նրանք չեն համարձակվում գրել այն մասին, թե այդ ծանր տարիներին ինչքան ռազմական տեխնիկա և զենք է տվել սովետական ժողովուրդը մեր բանակին: Դրա փոխարեն նրանք անընդհատ գովերգում են ամերիկյան էկոնոմի-

---

5 «Вторая мировая война и современность», М., 1972, էջ 13:

6 Նույն տեղում:

7 «Переписка Председателя Совета Министров СССР с президентами США и премьер-министрами Великобритании во время Великой Отечественной войны 1941—1945 гг.», т. I, М., 1957, էջ 306:

8 Տե՛ս նույն տեղում:

9 Տե՛ս А. А. Епишев, նշվ. աշխ., էջ 56:

կան, այն համարելով «հաղթանակի արսենալ»: Նրանց նպատակն է ցույց տալ, որ կարմիր բանակի ռազմական հաջողություններ գլխավորապես պայմանավորված են լենդ-լիզի օրենքով Սովետական Միությանը տրված ռազմական տեխնիկայով և զենքով: Քանի որ դա ԱՄՆ-ում ընդունված պաշտոնական կարծիքն է, որ արտահայտված է անգամ դասագրքերում, անհրաժեշտ է փաստերով ցույց տալ դրա կեղծությունը: Հայրենական պատերազմի ընթացքում ԱՄՆ-ից և Անգլիայից Սովետական Միությունը ստացել է տարբեր տրամաչափի 9600 հրանոթ, 10800 տանկ, 18700 ինքնաթիռ (որի որոշ մասը՝ հնացած կոնստրուկցիաների): Նույն ժամանակամիջոցում մեր զինված ուժերը սովետական թիկունքից ստացել են 488 հազար տարբեր տրամաչափի հրանոթ, 104 հազար տանկ և ինքնագնաց հրանոթ, 137 հազար ինքնաթիռ[10], ինչպես նաև ռազմական այլ տեխնիկա, զենք և սպառազինություն: Այդ թվերի պարզ համեմատությունից հետևում է, որ չժխտելով լենդ-լիզի օրենքի համաձայն ԱՄՆ-ից Սովետական Միության ստացած ռազմական տեխնիկայի և զենքի կարևոր նշանակությունը, բնավ չի կարելի այն գերագնահատել, ինչպես վարվում են պատերազմի պատմության բուրժուական կեղծարարները: Այստեղ պետք է հիշատակել նաև, որ խոսելով լենդ-լիզի օրենքի համաձայն ՍՍՀՄ ուղարկված ռազմական տեխնիկայի մասին, նրանք օգտագործում են պլանավորված թվերը և ոչ թե փաստորեն ուղարկվածներին վերաբերող թվերը, որ շատ ավելի պակաս են եղել, ըստ որում համառորեն լռում են ՍՍՀՄ-ում արտադրված ռազմական տեխնիկայի քանակի մասին: Բնորոշ է նաև, որ լենդ-լիզի համաձայն ԱՄՆ-ից և Անգլիայից ՍՍՀՄ ռազմական տեխնիկա և զենք ուղարկվել է հիմնականում Ստալինգրադում ձեռք բերված մեծ հաղթանակից հետո, սկսած 1943 թ., երբ արդեն արմատական բեկում էր առաջացել սովետա-գերմանական ռազմանակատում՝ հօգուտ կարմիր բանակի, մինչդեռ պատերազմի առաջին մեկ և կես տարում, մեր երկրի համար ամենածանր օրերին, այդ ռազմական տեխնիկան և զենքը առաքվում էր խիստ դանդաղ: Այսպես, 1941 թ. հունիսից դեկտեմբեր ՍՍՀՄ է ուղարկվել լենդ-լիզով նախատեսվածի միայն 0,1 տոկոսը[11]:

Բնորոշ է, որ ամերիկյան պատմաբանները, խոսելով երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր ու վճռական ճակատամարտերի մասին, նորից կեղծում են իրականությունը: Դրա օրինակը կարող է լինել Դ. Մոլի «Երկրորդ համաշխարհային պատերազմի մեծ ճակատամարտերը» մենագրությունը: Թվում է, թե այդ վերնագրի տակ պետք է տվեր իրոք մեծ ճակատամարտերի պատմությունը, սակայն հեղինակը այդպես չի վարվել և չէր կարող վարվել, քանի որ իր առջև հիմնական խնդիր է ունեցել կեղծել իրականությունը:

Իր այդ գրքում Դ. Մոլը թվարկում է 13 խոշոր ճակատամարտ, որոնց շարքում հիշատակում է միայն Մոսկվայի և Ստալինգրադի ճակատամարտերը, իսկ Կուրսկ Օրյոլի, Բելոռուսիայի, Մերձբալթիկայի, Բելգիայի և Հայրենական պատերազմի մյուս փայլուն ճակատամարտերի մասին լռում է: Դրա փոխարեն նա հիշատակում է Գյուանկերկի, Կիրենաիկայի, Եգիպտոսի, Միդուեյի

---

10 *Տե՛ս* «История коммунистической партии Советского Союза», т. 5, кн. 1, М., 1970, *էջ* 546, 644:

11 *Տե՛ս* А. А. Епишев, *նշվ. աշխ., էջ* 62:

և անգլո-ամերիկյան զորքերի մյուս՝ թվով 11 օպերացիաներ: Ինարկե, դրանք էլ կարևոր օպերացիաներ են եղել, բայց օբյեկտիվ պատմաբանը երբեք իրավունք չուներ «մոռանալ» դրանցից ավելի խոշոր ու վճռական ճակատամարտերը, որոնք տեղի են ունեցել սովետա-գերմանական ռազմանակատում: Հետաքրքիր է, նաև, որ պատմաբան Դ. Մոլը և ուրիշները խոսելով Մոսկվայի և Ստալինգրադի մեծ ճակատամարտերի մասին, նսեմացնում են նրանց խոշոր նշանակությունը, նեղացնում նրանց մասշտաբները և մի կողմ թողնում այդ ճակատամարտերի մեծ արդյունքները: Դա մասամբ բացատրվում է նաև նրանով, որ ինչպես խոստովանում է Դ. Մոլը, նրանց խորհրդատուներն են եղել ամերիկյան և անգլիական ռազմական գործիչներ ֆելդմարշալ Ա. Օկինլեկը, գեներալ Օ. Բրեդլին և ուրիշները, որոնք ղեկավարել են ամերիկյան ու անգլիական զորքերի օպերացիաների մի մասը:

Բուրժուական պատմաբանները բացահայտ կերպով կեղծում և աղավաղում են նաև Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության հաղթանակի գործոնները: Ինչպես հայտնի է, մեր հաղթանակի գլխավոր պատճառները են ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակարգի առկայությունը, բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության անխախտ դաշինքը, սովետական ժողովուրդների բարեկամությունը և ռազմական համագործակցությունը, կոմունիստական կուսակցության կազմակերպիչ և ղեկավար դերը, սովետական հայրենասիրությունը, կարմիր բանակի ռազմիկների հերոսական սխրանքները, թիկունքի աշխատավորների հայրենանվեր աշխատանքը, պարտիզանական պայքարը թշնամու թիկունքում և այլն:

Հակառակ այս հանրահայտ փաստերի, պատմաբան Դ. Միխելը իր «Ընդհատակյա պատերազմ» գրքում այն միտքն է զարգացնում, որ եթե գերմանական ֆաշիստները բացահայտ կերպով ցույց չտային իրենց դաժանությունները և այդ մասին չխոսեին իրենց ծրագրային փաստաթղթերում, ապա օկուպացված երկրամասերում քիչ թշնամիներ կունենային ու չէին պարտվի: Պատմաբան Ա. Միտոնը ֆաշիստական Գերմանիայի պարտության գլխավոր պատճառը համարում է այն, որ Հիտլերը չկարողացավ հիշտ օգտագործել Գերմանիայի տրամադրության տակ եղած հսկայական պոտենցիալ հնարավորությունները: Նա գտնում է, որ եթե այդ հնարավորությունները հիշտ օգտագործվեին, Գերմանիան Սովետական Միությանը կհաղթեր պատերազմի առաջին իսկ ամիսներին, իսկ այնուհետև, առանց երկրորդ ճակատի, իր ուժերը կուղղեր Արևմուտք: Ինչպես տեսնում ենք, այդ պատմաբանը ֆաշիստական Գերմանիայի պարտությունը բացատրում է միայն սուբյեկտիվ գործոնով՝ Հիտլերի սխալներով: Մինչդեռ հայտնի է, որ ֆաշիստական բանակի ձախողումը Արևելյան ճակատում ոչ այնքան Հիտլերի սխալների և ավանտյուրիզմի արդյունքն էր, որքան սովետական ժողովրդի ու նրա հերոսական բանակի ջախջախիչ հարվածների: Առանձին պատմաբաններ ֆաշիստական Գերմանիայի պարտությունը բացատրում են նրա այսպես կոչված դաշնակիցների, ավելի հիշտ սատելիտների՝ խորտիական Հունգարիայի, բագավորական Ռումինիայի, մանչուրիայի Ֆինլանդիայի և ֆաշիստական Իտալիայի թույլությամբ, իսկ պատմաբանների մի այլ խումբ արևելքում ֆաշիստական բանակի պարտության պատճառները փնտրում է Սովետական Միության աշխարհագրական և բնակլիմայական պայմանների մեջ:

Պատերազմի պատմության կեղծարարները ջանքեր չեն խնայում կեղծելու, աղավաղելու նաև կարմիր բանակի ազատագրական մեծ միսիան ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի լծի տակ գտնվող Եվրոպայի և Ասիայի շատ ժողովուրդների նկատմամբ: Հայտնի է, որ չունենալով ոչ մի նվաճողական ձգտում, Սովետական Միությունը և նրա զինված ուժերը, գլխովին ջախջախելով հիտլերյան կոալիցիան, ազատագրեցին ֆաշիստական լծի տակ հնձող ժողովուրդներին: Մինչդեռ բուրժուական կեղծարարները ամեն կերպ փորձում են ցույց տալ, որ Սովետական Միությունը ունեցել է նվաճողական ձգտումներ, որ նա ոչ թե ազատագրել է այդ ժողովուրդներին, այլ նրանց զրկել իրենց պետականությունից և այլն: Բուրժուական այդ կեղծարարների մերկացման լավագույն փաստերից մեկը հանդիսանում է մի շարք ժողովրդա-դեմոկրատական սովետներն պետությունների ստեղծումը Եվրոպայում և Ասիայում և ապա սոցիալիստական միասնական լագերի առաջացումը, որը գնալով ամրապնդվում և հզորանում է:

Կեղծարարության և հակասովետիզմի կողմնակիցներին մեծ անհանգստություն է պատճառում նաև Վարշավայի պայմանագրի կազմակերպության գոյությունը, մի կազմակերպություն, որը ստեղծված է լիակատար իրավահավասարության հիման վրա և հանդիսանում է Եվրոպայի սոցիալիստական երկրների հզոր ռազմական դաշինքը: Նրա գոյությունը սանձահարում է պատերազմի հրձիգներին, բոլոր ռեակցիոն ուժերին և մեծ չափով նպաստում Եվրոպայում ու ամբողջ աշխարհում խաղաղության պահպանությանը, որին ձգտում են բոլոր խաղաղասեր ուժերը: Գրելով կամ խոսելով Վարշավայի պայմանագրի կազմակերպության մասին, պատմության բուրժուական կեղծարարները հնարում են այսպես կոչված «սովետական թելադրանքի», «սովետական բանակի ենթման», այդ կազմակերպության մեջ ընդգրկված երկրների «սովերենիտետի խախտումների» մասին և այլն: Դրա գլխավոր նպատակն է անվստահություն սերմանել Սովետական Միության նկատմամբ, թուլացնել սոցիալիստական լագերի երկրների դաշինքը և համագործակցությունը: Սակայն այստեղ ևս բուրժուական կեղծարարները դատապարտված են անհաջողության, գնալով ավելի ու ավելի է հզորանում սոցիալիստական լագերի երկրների և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ ռազմական դաշինքը: Այդ երկրների ժողովուրդները և կառավարությունները հավատարմորեն պահպանում և անշեղորեն կենսագործում են Վ. Ի. Լենինի պատգամը այն մասին, որ սոցիալիստական կարգերի պահպանության համար անպայման պետք է հաստատել ամուր ռազմական և տնտեսական դաշինք[12]:

---

12 Տե՛ս В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 40, էջ 46